ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության քաղաքացիների՝ իրենց տարածքներով առանց վիզաների տեղաշարժման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով բարեկամական, բարիդրացիական հարաբերությունները զարգացնելու, առևտրական, գիտատեխնիկական, մշակութային և այլ կապերի ամրապնդմանը նպաստելու ցանկությամբ,

նկատի ունենալով հյուպատոսական բնագավառում սկզբունքորեն նոր հարաբերությունների հաստատման գործնական նպատակահարմարությունը,

ելնելով հյուպատոսական ծառայությունների համագործակցության զարգացման փոխշահագրգռվածությունից,

անհրաժեշտ համարելով Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և շահերի իրավական պաշտպանության ապահովումը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերի քաղաքացիները իրավունք ունեն մեկնել, մուտք գործել և տեղաշարժվել սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքով առանց վիզաների անձը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում:

Այդ պետություններում մշտապես բնակվող այլ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը, ելքը և տեղաշարժը կարգավորվում են Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությամբ:

Կողմերի ազգային օրենսդրությամբ կարող է նախատեսվել իրենց տարածքով Կողմերի քաղաքացիների, այլ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց տեղաշարժման մասին սահմանափակումներ մտցնելը:

Հոդված 2

Երրորդ պետությունների տարածքում մշտապես բնակվող Կողմերի քաղաքացիները կարող են մուտք գործել, մեկնել և

տեղաշարժվել սույն Համաձայնագրի Կողմերի տարածքներով նույնպես առանց վիզաների:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի Կողմերը պարտավորվում են միջազգային ուղևորային հաղորդակցության համար բացված անցումային կետերով թույլ տալ երրորդ պետություններ տարանցել նաև իրավական ու պատշաճ կերպով ձևակերպված, սահմանները հատելու իրավունք տվող փաստատղթեր ունեցող՝ սույն Համաձայնագրի Կողմերի քաղաքացիներին և միջոցներ կձեռնարկեն՝ կանխելու այն անձանց ելքը երրորդ պետություններ, որոնց ելքն արգելված է սույն Համաձայնագրի իրավասու մարմինների կողմից:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի դրույթները կասկածի տակ չեն դնում տարածքի պաշտպանության համար հատուկ միջոցներ ձեռնարկելը, մասնավորապես, իրենց անվտանգությանը սպառնացող իրադրություններում: Այս դեպքում վերոհիշյալ քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց առանց վիզաների տեղաշարժը չի բացառում Կողմերի իրավունքը՝ իրականացնել համապատասխան անձնագրային և մաքսային վերահսկողություն:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի Կողմերը գործող կհամարեն քաղաքացիությունը հաստատող նախկին ԽՍՀՄ փաստաթղթերը մինչև համապատասխան ազգային փաստաթղթերը կիրառման մեջ մտցնելը:

Հոդված 6

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի Կողմերը կկիրառեն «ԽՍՀՄ քաղաքացիների՝ ԽՍՀՄ-ից ելքի և ԽՍՀՄ մուտք գործելու կարգի մասին» օրենքի դրույթները սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից, եթե մինչ այդ չընդունվեն այդ հարցերին վերաբերող իրենց ազգային ակտերը:

Հոդված 8

Կողմերը կանոնավոր կերպով կտեղեկացնեն մեկը մյուսին սույն Համաձայնագրի դրույթների կիրառման ոլորտին վերաբերող հարցերի մասին, մասնավորապես, անձի քաղաքացիությունը հաստատող գործող փաստաթղթերի մասին, վերջիններս տալու և օգտագործման կարգի փոփոխման, ինչպես նաև համապատասխան օրենսդրական ակտերի մասին:

Հոդված 9

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են մտցվել փոփոխություններ և լրացումներ:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից 30 օր հետո:

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվականի մայիսի 19-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և վրացերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի ապրիլի 18-ից: